ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«10» Հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/957-Ա

ք. Արմավիր

«ՀԱՑԻԿԻ ԱՎԵՏԻՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀՐԱՉՈՒՀԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հրաչուհի Հայրապետյանի 2025 թվականի նոյեմբերի 6-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հրաչուհի Հայրապետյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի նոյեմբերի 11-ից 28-ը ներառյալ՝ 14 աշխատանքային օր տևողությամբ:
2. Հրաչուհի Հայրապետյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Սիմա Աղաջանյանին:
3. «Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Սիմա Աղաջանյանի աշխատավարձի վճարումը 2025 նոյեմբերի 11-ից 28-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Հրաչուհի Հայրապետյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի դեկտեմբերի 1-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Восстановимая подпись

X

Արամ Գրիգորյան

Подписано: GRIGORYAN ARAM 2509720082